

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ



ՄԵԿՆԱՐԿԵՑ 10-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵԶՐԱՓՈՎԻՉ ՆՏԱՆՈՐԶԱՆԸ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ԱՆՉԱՓԱՐԱՍՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾՆ ԷՐ

Սեպտեմբերի 3-ին մեկնարկեց Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի եզրափակիչ՝ աշնանային նստաշրջանը:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավա Պապուաշվիլիլու հայտարարությամբ, հաշվի առնելով առաջիկա ընտրությունները, լիազորման նիստերը կանցկացվեն խտացված կարգով. այդպիսով խորհրդարանի անդամները հնարավորություն կունենան՝ մասնակցելու ընտրական մարաթոնին եւ հանդիպելու ընտրողների հետ:

Վրաստանի խորհրդարանը, իր լիազորման նիստում, ձեռնամուխ եղավ երկրորդ ընթերցմամբ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ԱՆՉԱՓԱՐԱՍՆԵՐԻ պաշտպանության մասին» օրենքի քննարկմանը:

Օրինանախաձեռնության առանձին հոդվածների պարզաբանմամբ հանդես եկավ խորհրդարանի անդամ Թենգիզ Շարմանաշվիլին:

- Եթե մենք հետեւելու ենք ընդդիմախոսների հռետորաբանությանը, ըստ որի՝ ընտանիքը միայն կրոնական կատեգորիա է, ապա սահմանադրության մեջ էլ ընտանիքի մասին գրառում չպետք է լինի: Օրենսդիրը, նաեւ մեր երկրի բնակչության մեծ մասն այդպես չի տեսնում, եւ ուզում են ձեզ ասել, որ աշխարհում նույնպես այդպես չեն տեսնում: Ընտանիքը հասկացությունն էր որպես կարգավորումները կարելի է գտնել այլ երկրների սահմանադրություններում, դա մեր «նուր-հաու»-ն չէ,- ասաց Թենգիզ Շարմանաշվիլին եւ հավելեց, որ իրենք միանգամայն ճիշտ քայլ են արել եւ գնացել են այն ուղղությամբ, որը սկսվել է 2017 թվականին, երբ կանոնակարգվեց ընտանիքը հասկացությունը:

Քննարկումից հետո խորհրդարանը՝ 81 կողմ



Թենգիզ Շարմանաշվիլի

ձայներով, երկրորդ ընթերցմամբ ընդունեց ներկայացված օրինանախագիծը, որը փոփոխություններ է նախատեսում գործող 18 օրենքներում: Օրինանախագիծը նախատեսում է նաեւ ԼԳԲՏ-ի քարոզչության արգելում ու ԼԳԲՏ-ի անձանց իրավունքների սահմանափակում:

Խորհրդարանը «Հանրային գնումների մասին» Վրաստանի օրենքում փոփոխություններ մտցնելու վերաբերյալ նախագծի փաթեթը, արագացված կարգով, երկրորդ եւ երրորդ ընթերցմամբ քննարկեց եւ կողմ քվեարկեց:

Նշյալ հարցը, լիազորման նիստում, Վրաստանի կառավարության խորհրդարանական քարտուղար Վախթանգ Բաջիաշվիլին ներկայացրեց: Նա նշեց, որ համաձայն «Հանրային գնումների մասին» օրենքում մտցված փոփոխությունների, գործող օրենքով նախատեսված հիմնական դրույթները կգործեն 2005 թվականի հունվարի 1-ի փոխարեն՝ 2027 թվականի հունվարի 1-ից:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆԸ

Սեպտեմբերի 1-2-ը, պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի պաշտպանության նախարարության պատվիրակությունը՝ նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորությամբ:

Այցի շրջանակներում՝ Հայաստանի պաշտպանության նախարարը հանդիպեց Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի, պաշտպանության նախարար Իրակլի Չիքովանուի հետ, այցելեց Չերոսների հրապարակ, ծաղկեպսակ խոնարհեց հուշակոթողին եւ հարգանքի տուրք մատուցեց զոհերի հիշատակին:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻԶԵՆ ՈՂՋՈՒՆԵՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՈՒՄԸ



Սեպտեմբերի 2-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում

գտնվող Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի եւ նրա գլխավորած

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 2-ին Երեւանում անցկացվեց վրաց-հայկական խորհրդարանների արտաքին հարաբերությունների համաժողովների տարեկան համատեղ նիստը:

Նիստին մասնակցեցին պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի խորհրդա-

րանի արտաքին հարաբերությունների կոմիտեի պատվիրակություն-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆԵՐԿԱՅԱՅՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱԿՏԻՎԱՅՄԱՆ ՆՈՐ ԶԵՎԱԶՊ

Սեպտեմբերի 2-ին, Երեւանում, վրաց-հայկական խորհրդարանների արտաքին հարաբերությունների կոմիտեի նիստի շրջանակներում, Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախարար Նիկոլոզ Սամխարաձեն հանդիպեց Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հետ:



Արձանագրելով Հայաստանի ու Վրաստանի միջև հարաբերությունների խորացող զարգացումը՝ Ալեն Սիմոնյանը հանդես եկավ

խորհրդարանական շփումների ակտիվացման նոր ձեւաչափեր մշակելու առաջարկով:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻԶԵ. «ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԶՏԱԿԵՅՎԻ ՎՐԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՆՋՆԱՀԱՏՈՒԿ ԴԵՐԸ»



Չոկտեմբերի 26-ին խորհրդարանական ընտրություններում «Վրացական երազանքի» կողմից խորհրդարանական մեծամասնություն ստանալու անհրաժեշտությունը՝ կառավարող թիւը պայմանավորում է նաեւ սահմանադրական փոփոխությունների իրականացմամբ:

Մասնավորապես, ինչպես հայտարարեց «Վրացական երազանքի» պատվավոր նախագահ Բիծինա Իվանիշվիլին, խորհրդարանում «Վրացական երազանքի» մեծամասնությունը հնարավորություն կընձեռի սահմանադրությունում կատարել փոփոխություն՝ ըստ որի

առանձնակի կընդգծվի Վրաց Ուղղափառ եկեղեցու դերը՝ վրաց պետականության պահպանման, վրաց ժողովրդի հոգեւոր եւ մշակութային զարգացման ազգային նույնականության պահպանման գործում:

Վրաստանի վարչապետ (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԻՆՏԵՐՎՅՈՒՄ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴՊՐՈՑԸ» ՍԿԱՆԵՑ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

Պետական նախարար Թեա Ախվլեդիանին բացեց «Քաղաքացիական ինտեգրման դպրոց» եւ խոսքով դիմեց ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված շրջանների երիտասարդությանը:

Թեա Ախվլեդիանին «Քաղաքացիական ինտեգրման դպրոցի» բացման միջոցառմանը, որը պետական նախարարի ապարատի նախաձեռնությամբ եւ կազմակերպմամբ անցկացվեց, մասնակիցներին դիմեց ու-

ջույնի խոսքով: Պետական նախարարը երիտասարդներին ծանոթացրեց գերատեսչության իրավասության շրջանակներում ընդգրկված ինչպես հաշտեցման եւ ներգրավվա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)



Թեա Ախվլեդիանի «Քաղաքացիական ինտեգրման դպրոցի» բացման միջոցառմանը

ԱՅՑ



Սիգրիս Լազարյանը և Սելինե Առաքելյանը

ԴԵՄՊԱՆ ՄԵԼԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՌՈՒՄՐԱՎԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՆԻՆՈ ԱՃԱԲԻՉԵԻՆ

Սեպտեմբերի 3-ին Վրաստանում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Սելինե Առաքելյանը գտնվում էր Ռուսթավի քաղաքում:

Բարձրաստիճան հյուրին դիմավորեց Ռուսթավի մունիցիպալիտետի քաղաքապետ Նինո Լացաբիժեն և դեսպանին ներկայացրեց քաղաքում ընթացող նախագծերն ու բարեփոխումները: Դեսպանը ծանոթացավ քաղաքի մու-

նիցիպալային Մեդիա կենտրոնի գործունեությանը: - Չեռաքելյանը հանդիպում ունեցանք Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանի հետ: Ձրուցեցինք քաղաքի զարգացման ու ապագա հեռանկարների, ընթա-

ցի բարեփոխումների շուրջ, որոնք քաղաքապետարանի կողմից այսօր իրականացվում են Ռուսթավիում, նշեց Նինո Լացաբիժեն: - Ռուսթավի քաղաքում առաջին անգամ են: Ուրախ են, որ եղա եւ ծանոթացա Վրաստանում մեծությամբ երրորդ կարևոր քաղաքին: Հանդիպեցի քաղաքապետ Նինո Լացաբիժեի հետ, տեղեկացա, թե ինչ տպավորիչ զարգացում է ունեցել քաղաքը վերջին երեք տարիների ընթացքում, ինչպես են աշխատում կայուն զարգացման ուղղությամբ, էկոլոգիայի հիմնախնդրի լուծման եւ ավելի բարեկարգ քաղաքի ստեղծման շուրջ, նշեց դեսպան Սելինե Առաքելյանը, Ռուսթավի քաղաքապետի հետ հանդիպումից հետո:

ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ԱԶԱԿՆՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պատվիրակության անդամների հետ: Հանդիպմանը ներկա էր նաև Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը:

Հանդիպմանը կարևորվեցին Վրաստան-Հայաստան ռազմավարական հարաբերությունները, ընդգծվեց բարձրաստիճան պատվիրակությունների միջև պարբերական շփումների արդյունավետությունը:

Վրաստանի վարչապետը ողջունեց պաշտպանության բնագավառում Վրաստան-Հայաստան համագործակցության զարգացումն ու իր լիակատար աջակցությունը հայտնեց այդ գործընթացին:

Իր հերթին Հայաստանի պաշտպանության նախարարը կարևորեց պաշտպանության ոլորտում փոխգործակցության զարգացումը և փոխանցեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի ողջույնները: Հանդիպմանը Վրաս-

տանի վարչապետն ու Հայաստանի պաշտպանության նախարարն ընդգծեցին տարածաշրջանում երկարատև և կայուն խաղաղության հաստատման կարևորությունը: Վրացական կողմը պատրաստակամություն հայտնեց շարունակել աջակցել՝ տարածաշրջանում խաղաղության հաստատման ուղղությամբ գործադրվող ջանքերին:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի պաշտպանության նախարարությունում, գինվորական նվազախմբի և պատվո պահակախմբի մասնակցությամբ, Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի դիմավորման հանդիսավոր արարողությունից հետո, կայացավ երկու երկրների պաշտպանության զերատեսչությունների ղեկավարների առանձնագրույցը:

Նախարարները կարևորեցին հարեւան երկրների միջև բարեկամական հարաբերու-

թյունների ռազմական կրթության բնագավառում փորձի փոխանակման ուղղությամբ համագործակցության ակտիվացումն ու ընդլայնումը, ինչպես նաև երկուստեք ընդգծվեց տարածաշրջանում երկարաժամկետ և կայուն խաղաղություն հաստատելու կարևորությունը: Նշվեց, որ այս տարվա հունվարին ստորագրված ռազմավարական գործընկերության հռչակագիրը կնպաստի տարբեր ոլորտներում երկրների միջև համագործակցության ամրապնդմանը:

Առանձնագրույցին հաջորդած պատվիրակությունների ընդլայնված կազմով բանակցություններին կողմերը քննարկեցին Վրաստանի և Հայաստանի պաշտպանական զերատեսչությունների միջև 2024 թվականի երկրորդ համագործակցության ծրագրով նախատեսված ուղղությունները: Տվյալ փաստաթուղթը ստորագրվել է Վրաստանի պաշտպանության նախարարի՝ այս տարի Հայաստան կատարած այցի շրջանակներում: Հանդիպմանը ներկա էին պաշտպանության փոխնախարար Պատա Պատիաշվիլին, պաշտպանության ուժերի հրամանատարի տեղակալներ՝ զեներալ-մայոր Ջոնի Տատուցաշվիլին և բրիգադային զեներալ Իրակլի Ճիճինաձեն, ինչպես նաև Հայաստանի և Վրաստանի դեսպանները:

Հանդիպումից հետո Հայաստանի պաշտպանության նախարարը, Հերոսների հուշահամալիրում, հարգանքի տուրք մատուցեց Վրաստանի տարածքային ամբողջականության համար մղվող մարտերում զոհված մարտիկների հիշատակին:



ՀԱՅ-ՎՐԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նը՝ նախագահ Նիկոլոզ Սամխարաձեի գլխավորությամբ և Հայաստանի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի պատվիրակությունը՝ նախագահ Սարգիս Խանդանյանի գլխավորությամբ:

Նիստի շրջանակներում քննարկվեցին Վրաստանի և Հայաստանի միջև ռազմավարական գործընկերությունը և առկա համագործակցությունը, ընդգծվեց խորհրդարանական մակարդակով հարաբերությունների զարգացման համար նոր ձեռնարկների կարևորությունը:

Կողմերը խոսեցին տարածաշրջանային անվտանգության խնդիրների, առկա մարտահրավերների, Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված բարդ իրավիճակի մասին: Վրացական կողմը գործընկերներին տեղեկատվություն տրամադրեց Վրաստանում նախատեսված խորհրդարանական ընտրությունների և նախընտրական միջավայրի մասին:

Նիկոլոզ Սամխարաձեն շնորհակալություն հայտնեց իր գործընկերոջը՝ «Աբխազիայից և Յիսինվալիի շրջանից/Հարավային Օսեթիայից, Վրաստան ներքին տեղահանվածների և փախստականների կարգավիճակի մասին» ՄԱԿ-ի բանաձեւին Հայաստանի աջակցության համար:

Ձրույցում շրջափակվեց նաև Հարավային Կովկասում սահմանների սահմանազատման-սահ-



մանագծման գործընթացի արագ ավարտի կարևորությունը:

Հայաստանի արտաքին գործերի նախարարը հաստատեց իր անվերապահ աջակցությունը Վրաստանի տարածքային ամբողջականությանը:

Իր հերթին Նիկոլոզ Սամխարաձեն ևս մեկ անգամ նշեց, որ վրացական կողմը պատրաստ է իր ներդրումն ունենալ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացում և փորձի փոխանակմամբ օգնել Հայաստանին եվրամիությանն ինտեգրվելու ճանապարհին:

Հայաստանի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահը՝ Վրաստանի խորհրդարանի պատվիրակության անդամներին տեղեկացրեց Հայաստանում ընթացող գործընթացների, Հայաստանի ու Ադրբեջանի հարաբերությունների մասին: *Ըստ Վրաստանի խորհրդարանի և Հայաստանի Ազգային ժողովի մամուլ ծառայությունների միջավայրի ստեղծմանը:*

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿՎՊԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՆՈՐ ԶԵՎԱԶԱԹ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իր հերթին Նիկոլոզ Սամխարաձեն շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար և ողջունեց Ազգային ժողովի նախագահի նախաձեռնությունը: Խոսելով տարածաշրջանային զարգացումներից՝ Նիկոլոզ Սամխար-

աձեն նշեց, որ Վրաստանը սատարում է Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագրի ստորագրմանը:

Կողմերը քննարկեցին նաև վրաց-հայկական օրակարգին վերաբերող և տարածաշրջանային հետաքրքրություն ներկայացնող տարաբնույթ այլ հարցեր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երեւանում, Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահը հանդիպում ունեցավ նաև Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հետ:

Հանդիպմանը խոսվեց Վրաստանի և Հայաստանի միջև առկա հարաբերությունների, ռազմավարական գործընկերության կարևորության և տնտեսական համագործակցության զարգացման հնարավորությունների մասին:

Կողմերը քննարկեցին տարածաշրջանային անվտանգության



մարտահրավերները և ապագա քայլերը, որոնք կնպաստեն տարածաշրջանում կայուն և խաղաղ միջավայրի ստեղծմանը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԲԱԽԻՁԵ. «ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԶՍԱԿԵՅՎԻ ՎՐԱՅ ԵԿԵՂԵՅՈՒ ԱՌԱՋՆԱՀԱՏՈՒԿ ԴԵՐԸ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

Իրակլի Կորբախիձե, անդրադարձնալով վերոնշյալ սահմանադրական փոփոխության անհրաժեշտությանը, նշեց, որ սահմանադրության մեջ կհայտնվի մուտք, որով կորոշվի, որ ուղղափառությունը վրացական պետության ինքնության սյունն է: - Սահմանադրության մեջ կհայտնվի ամուր արձանագ...

րություն, որը նորովի կսահմանի Ուղղափառության կարգավիճակը, դա կազդի Ուղղափառ եկեղեցու վրա՝ որպես մեր երկրի համար կարևորագույն հաստատության, - ասաց Իրակլի Կորբախիձե և հավելեց, որ այդ հարցով խորհրդատվություններ անցկացվեցին վրաց Ուղղափառ եկեղեցու պատրիարքության հետ և, ըստ վարչապետի, խորհրդատ...

վությունները բավականին արդյունավետ են, և կողմերը հասել են ընդհանուր պայմանավորվածության: - Մենք համաձայնության ենք եկել այս հարցում, սահմանադրության մեջ կհայտնվի շատ ամուր արձանագրություն, որը նորովի կսահմանի Ուղղափառության կարգավիճակը, և դա կազդի Ուղղափառ եկեղեցու վրա՝ որպես մեր երկրի համար...

կարևորագույն հաստատության: Մասնավորապես, կլինի արձանագրություն, որը կսահմանի, որ ուղղափառությունը, ուղղափառ քրիստոնեությունը մեր պետության ինքնության հիմնասյունն է: - ասաց վարչապետը՝ հավելելով, որ խորհրդակցությունների մանրամասների հրապարակումը պատրիարքության իրավասու...

ԻՆՏԵՐՎՅՈՒ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵՐՎՅԱՆ ԴՊՐՈՑԸ» ՍԿՍԵՑ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(Սկզբը՝ 1-ին էջում)

ծության, այնպես էլ՝ քաղաքացիական իրավահավասարության ու ինտեգրման պետական քաղաքականության իրականացման ընթացքին, խոսեց ձեռքբերված շոշափելի արդյունքների և ապագա ծրագրերի մասին:

Քաղաքացիական ինտեգրման դպրոցի ծրագրում էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակեցված Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջաններից շուրջ 70 երիտասարդ է մասնակցում:

Թեև Ախվլեդիանու հայտարարությանը՝ երիտասարդները մեկ շաբաթվա ընթացքում սպառիչ և մանրակրկիտ տեղեկություններ կստանան պետության կողմից ազգային փոքրամասնությունների երիտասարդների համար ներդրված աջակցող մեխանիզմների մասին: Կկայանան հանդիպումներ այնպիսի արդիական հարցերի շուրջ, ինչպիսիք են քաղաքացիական իրավահավասարությունը, Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրումը, մեղիա գրագիտությունը, երիտասարդական առաջնորդությունը՝ քաղաքացիական ինտեգրման գործընթացում, կանանց իրավունքներն ու ազատությունները, սեռական հավասարությունը և այլն:

- Մեր «Քաղաքացիական ինտեգրման դպրոցի» նախաձեռնությունը հիմնականում կողմնորոշված է ազգային փոքրամասնություններով խիտ բնակեց...

ված տարածքների երիտասարդների համար և նպատակ ունի նպաստել քաղաքացիական ինտեգրման բազմակողմանի գործընթացում երիտասարդների ընդգրկվածությանն ու նրանց միջև միջմշակութային երկխոսության աջակցմանը: Մի քանի օրվա ընթացքում տրեմինգ-սեմինարը երեք հոսքով կընդունի երիտասարդների տարբեր խմբերի, որի շրջանակներում, նրանք հնարավորություն կունենան ծանոթանալ քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրացիայի առաջնահերթություններին, բարձրացնել գիտակցությունը պետական քաղաքականության շրջանակներում իրենց համար բացված հնարավորությունների ու հեռանկարների մասին, ինչպես նաև ինտերակտիվ ռեժիմով հնչեցնել անձնական կարծիքներն ու իրականացնել սեփական գաղափարները: Հետեաբար, երիտասարդների հետ մեր հանդիպումները առավել հետաքրքիր ու արդյունավետ էին, հաշվի առնելով այն, որ նրանք կիսվեցին սեփական կարծիքներով ու առավել օգտակար գնահատեցին այս միջոցառումների շրջանակներում ստացած գիտելիքներն ու փորձը,- հայտարարեց պետախարար Թեա Ախվլեդիանին:

Ինտերակտիվ ռեժիմով ընթացող հանդիպմանը Թեա Ախվլեդիանին պատասխանեց դպրոցի մասնակիցների



Դիանա Մինայան

հարցերին ու քաղաքացիական ինտեգրման գործընթացում երիտասարդների դերի և ընդգրկվածության մասին լսեց նրանց կարծիքները: Մասնակիցներին խոսքով դիմեց նաև Հարավային Կովկասում ՄԱԿ-ի մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատարի գրասենյակի ավագ խորհրդական Վլադիմիր Շկոլնիկովը:


- Հետաքրքիր է արդյունավետ հանդիպումներ էին, շատ տեղեկություններ ստացանք, ինչը համոզված են, որ անհրաժեշտ կլինի մինչև կյանքի վերջ և դրանցով կկիսվեն իմ հասակակիցների ու համակուրսեցիների հետ,- նշեց «Քաղաքացիական ինտեգրման դպրոցի» մասնակից, Ախալցխի Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի ուսանողուհի Դիանա Մինայանը:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐԵՆԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆԿԱԾ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ՌԵՏՏՐՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍՊԱՌԿԵՑ ԿՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ 31 ՀԱՅԱՐ 233 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԱԾՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՅՈՒՄ Է ԱՆՅԵԼ 476-Ը

Սեպտեմբերի 2-ին լրացավ «Օտարերկրյա ազդեցության բախանցիկության մասին» օրենքով նախատեսված «Գործակալների ռեստրում» գրանցման համար հատկացված ժամանակը:



Նախաճեղճություն ՌԵՍԵՆԿՈՆ ՆԱՃՈՂՆԵՐՈՒ

Վրաստանի արդարադատության նախարարության տվյալներով, ներկա դրությամբ, Վրաստանում գործող 31 233 հասարակական կազմակերպություններից գրանցում է անցել 476-ը, այսինքն՝ ընդհանուր թվի մոտ մեկ տոկոսը:

Վրաստանի արդարադատության փոխնախարար Թամար Տղեշելաշվիլու խոսքով, ներկա դրությամբ, Հանրային ռեգիստրի ազգային գործակալությունը հանձնարարել է՝ 476 դիմորդի գրանցել համապատասխան ռեգիստրում:

- Մենք համագործակցում ենք բոլոր դիմորդների հետ, ամեն ինչ անում ենք, որ նրանց համար որել խոչընդոտ չստեղծվի գրանցման ժամանակ: Պետք է ասել նաև, որ բոլոր տվյալները կստուգվեն օրենքի բոլոր պահանջներին համապատասխան,- հայտարարեց Թամար Տղեշելաշվիլին՝ հավելելով, որ գրանցումից խուսափող կազմակերպությունների դեմ կիրականացվեն օրենքով նախատեսված պատժամիջոցներ:

Հանրային ռեստրում օտարերկրյա 20 և ավելի տոկոս ֆինանսավորում ստացող հասարակական կազմակերպությունների պարտադիր գրանցման գործընթացի հետ կապված բարդությունների բացահայտ օրինակն է «Սիրցխվիլի» («Ամոթ է») հասարակական կազմակերպության վարչապետը:

Նշենք, որ «Օտարերկրյա ազդեցության բախանցիկության մասին» օրենքի քննարկմանը այդ կազմակերպությունը, երկրի խորհրդարանի մոտ անցկացվող բողոքի ցույցերի, եթե ոչ ամենակտիվ, ապա ակտիվ կազմակերպիչներից մեկն էր: Չնայած մնան դիրքորոշման, օգոստոսի 30-ին, «Սիրցխվիլի» շարժումը տեսանյութ հրապարակեց, որտեղ կազմակերպության անդամները հայտարարում էին, որ, «Օտարերկրյա ազդեցության բախանցիկության մասին» օրենքի համաձայն, գրանցվելու են Հանրային ռեգիստրի ազգային գործակալությունում: Տեսանյութը հանրային ցանցում հասանելի էր ողջ օրվա ընթացքում, հետո անհետացավ, և արդեն հնարավոր չէ այն գտնել անգամ կազմակերպության ֆեյսբուքյան էջում:

Դիրքորոշման փոփոխությունը «Սիրցխվիլի»-ն բացատրում է նրանով, որ պատշաճ չեն գնահատել այն հետեւանքները, որոնք կարող էր ունենալ գրանցման մասին որոշումը:

«Մեր որոշման հիմքում ընկած էր՝ ընտրություններին քաղաքացիների մասնակցությունը մեծացնելու ծրագրված արշավներ իրականացնելու նպատակով՝ հոկտեմբերին կայանալիք ընտրություններում իշխանափոխությունը հեշտացնելու համար, սակայն, ելնելով արձագանքներից, կարծում ենք, որ մենք օգնել ենք նույնիսկ նիհիլիզմ և հիասթափություն սերմանել մեր գործընկերների շրջանում, ինչը ակնհայտորեն վնասում է ընդհանուր նպատակին և՛ կարծածամկետ, և՛ երկարաժամկետ»,- ասված է կազմակերպության հայտարարության մեջ:

Միաժամանակ կազմակերպությունը սխալ է համարում ընտրություններից առաջ կառավարությանը տուգանքներ վճարելը՝ ընդգծելով, որ տուգանքներ նշանակելու դեպքում էլ, «Սիրցխվիլի»-ն չի պատրաստվում վճարել տուգանքները:

Եվ որպես դիրքորոշման փոփոխության արդյունք, նշված է, որ պաշտոնաթղ է եղել կազմակերպության ղեկավար Գիրգի Մեմվանաձեն:

Հաղորդագրության վերջում նշված է, որ «Սիրցխվիլի»-ն «շնորհակալ է գործընկերներին անկեղծ քննադատության ու խորհուրդների համար»:

Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են:

Real estate advertisement for 'ՊԱՐԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆ ՈՒ ԱՄԱՌԱՆՈՅԸ' with 135 units, contact number 300 44 08, and logo 125.